ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019-2020 ՈՒՍ. ՏԱՐԻ

Ավանդական բժշկության համալսարանի Արտաքին կապերի բաժինը (այսուհետ նաև արտաքին կապերի բաժին) համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԱԲՀ-ի և Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանգրում

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՄՄՆ կողմից սահմանված ժամկետներում (09.07.2019-20.09.2019) կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՄՆ՝ փորձաքննության:

1.3. Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանգրում:

1.4. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.6. Հոկտեմբեր ամսվա վերջում կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ:

1.7. Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2019թ. սեպտեմբեր–հոկտեմբեր և 2020թ. փետրվար-մարտ ամիսներին՝ ուսանողներին ԲՈՒՀ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՄՆ հաստատումը ստանալուց հետո: պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներն ու փաստաթղթերը և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և

վիզաների վարչություն: 2019թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին կատարվել է արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ (Campus International, Study Medicine Europe և այլն): Ուսանողների հավաքագրումը կատարվում է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա:

Արտաքին կապերի բաժինը, համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի համաձայն իրականացնում է ուսանողների ներգրավում համալսարանի կրթական գործընթացին:

2.2. 2018թ. ընդունելությունը ՀՀ ԿԳՄՄՆ կողմից բաց էր մինչև 20.09.2019թ, ուստի արտաքին կապերի բաժինը 2019-2020թ. ակադեմիական տարվա համար ուսանողների հավաքագրումը ավարտեց 20.09.2019թ.:

2.3.Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա: Ուսանողների ներգրավում համալսարանի կրթական գործընթացին իրականացվել է համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մշակված կարգերի:

2.4.Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.5. Դիմորդների դիմումները/ հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին: Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:

2.6. Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:

2.7. Արտաքին կապերի բաժինը աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու հարցում, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Տարվա ընթացքում Արտաքին բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ԱԲՀ ռեկտորին, ՀՀ ԿԳՄՄՆ ստորաբաժանումներ և այլն:

4. Արտաքին կապերի բաժինը բոլոր ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և Համալսարանի ստորաբաժանումների միջև: Տարվա ընթացքում իրականացվել են Հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ. Դեկանի, Ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Բաժինը աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրյա և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար: Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահպանվել ուսանողների և նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերում, էլեկտրոնային հաղորդագության և հեռախոսակապի միջոցով և նրանց հարցերին տրվել է օպերատիվ լուծում: Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիության ու առաջադիմության հետ կապված հարցերի վերաբերյալ:

5. Համեմատելով նախորդ տարիների հետ, կարող ենք փաստել, որ ընդլայնվել է օտարերկրյա ուսանողների թիվն ու աշխարհագրությունը: Ստորև ներկայացնենք ուսանողների ընդունելության արդյունքները դիագրամի տեսքով վերջին 3 տարիների ընթացքում:







Կատարվել է 7 տեղափոխվող ուսանողների ընդունելություն գարնանային կիսամյակում (2019-2020 ուս. տարի).

- *Բուժական ֆակուլտետ՝ 3 ուսանող (Հորդանանի քաղաքացիներ)*
- *Ստոմատոլոգիական ֆակուլտետտ՝ 4 ուսանող (Հորդանանի քաղաքացիներ)*

Հավելենք, որ 2019 թվ. սեպտեմբերին ԱԲՀ-ն ճանաչվել է Հորդանանի Հաշիմյան Թագավորության կրթության և գիտության նախարարության կողմից՝ ընդլայնելով միջազգային համագործակցությունը, և համալրել է Հորդանանի նախարարության կողմից ճանաչված արտասահմանյան համալսարանների շարքը:
http://rce.mohe.gov.jo/RecognizedUniversities

Ներկայացնենք նաև օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ընդհանուր քանակը 2019-2020 ուստարվա սկզբին ըստ երկրների:

N	Երկիր	Քանակ
1.	Հնդկաստան	181
2.	Իրաք	67
3.	Մեծ Բրիտանիա	24
4.	Իրան	9
5.	Եգիպտոս	2
6.	Ֆիլիպիններ	2
7.	Իռլանդիա	3
8.	Շվեդիա	1
9.	Գերմանիա	1
10.	Շրի Լանկա	1
11.	Սիրիա	1
12.	Հորդանան	1
13.	Վրաստան (սփյուռքահայ)	1
Ընդամենը		**294**

6. 2019թվ. դեկտեմբերի 20-ին Արտաքին կապերի բաժնի վարիչը մասնակցեց Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) կողմից կազմակերպած «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ. քաղաքականություն և պրակտիկա», ինչպես նաև «Փախստականների որակավորումների ճանաչում» թեմաներով դասընթացին: Սեմինարը տեղի ունեցավ Էրեբունի Պլազա բիզնես կենտրոնում (հասցե՝ ք. Երևան Վազգեն Սարգսյան 26/1):

Դասընթացը նախատեսված էր ՀՀ բուհերի միջազգային բաժինների և ընդունելության հարցերով զբաղվող (admission officers) աշխատակիցների համար և դրա նպատակն էր ներկայացնել օտարերկրյա որակավորումների ճանաչման հիմնական սկզբունքները՝ միջազգային և ՀՀ բուհերի փորձի հիման վրա: Դասընթացը անցկացվեց ինտերակտիվ եղանակով՝ տեսական և իրական օրինակների համակցությամբ:

Մասնակիցները դասընթացի ավարտին ստացան վկայական:

7.Պարբերաբար բաժնի կողմից կատարվել է տեղեկատվական նյութերի, հայտարարությունների, փաստաթղթերի պատրաստում և թարգմանություն:

8. Բաժնի գործառույթներից է նաև տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը:

2018-2019 ուս. տարում համալսարանի Ուս. խորհրդի և համալսարանի ստորաբաժանումների հետ միասին բաժինն իրականացրել է.

8.1. Ավանդական բժշկության համալսարանի և “Campus International” կազմակերպության համագործակցության շրջանակներում, 2019 թ. սեպտեմբերի 22-ին Ավանի սպորտ

դպրոցում տեղի ունեցավ “Campus International” կրիկետի առաջնությունը: Միջոցառումը կազմակերպվել էր “Campus International”-ի կողմից: Միջոցառմանը մասնակցում էին 6 թիմեր, բաղկացած 66 մասնակիցներից: Մրցաշարին մասնկացում էին ինչպես Ավանդական բժշկության համալսարանի, այնպես էլ այլ բուհերի ուսանողներ:

Ավանդական բժշկության համալսարանի "Black Vultures" թիմի կազմում հանդես էին գալիս տարբեր կուրսերի ուսանողներ՝ Մոհամմեդ Հիրֆանը, Աբդուլ Հասիբը, Սթիվենսն Օնիշերիթոթթաթիլ Ջեյսոնը, Ռօշան Ռաշիիդը, Մուհամմեդ Ռաֆիդի Փառութիկուննանը, Հաշիք Շան:

Մրցաշարի սկիզբը ազդարարվեց “Campus International” կազմակերպության ղեկավար պարոն Աշոկ Կրիշնայի կողմից: Բոլոր թիմերը խաղում էին մեծ ոգևորությամբ և եռանդով:

Մրցաշարի հաղթող ճանաչվեց "White Sharks" թիմը: ԱԲՀ-ի "Black Vultures" թիմը զբաղեցրեց 2-րդ տեղը:

Լավագույն խաղացող ճանաչվեց Նիխիլ Նաիրը՝ "Black Vultures" թիմից և լավագույն գնդակ նետող ճանաչվեց Ֆաիզալ Ֆայազն՝ "White Sharks" թիմից:

8.2. 2019 թվականի հոկտեմբերի 21-ին Ավանդական բժշկության համալսարանի և “Campus International”-ի կողմից ուսանողների շրջանում կազմակերպվեց «Մերձեցման երեկո»:

Միջոցառմանը մասնակցում էին Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակիցները, “Campus International” կենտրոնի աշխատակիցները, ՀՀ-ում Հնդկաստանի դեսպան ԿԴ Դեվելն ու դեսպանատան, Հնդկաստանի տնտեսական առևտրի կազմակերպության ներկայացուցիչները, ինչպես նաև համալսարանի տարբեր ազգությունների ուսանողներ:

Միջոցառման ընթացքում Ավանդական բժշկության համալսարանի և “Bharatiya”-ի ճարտարագիտության, գիտության և տեխնոլոգիաների ինովացիոն համալսարանի (BESTIU) միջև կնքվեց համագործակցության պայմանագիր, որը նպատակաուղղված է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերի խթանմանը, կրթական և հետազոտական ոլորտում փորձի փոխանակմանը, վերապատրաստման և զարգացմանն ուղղված գործողություններին, ինչպես նաև ԱԲՀ-ի և BESTIU-ի կողմից անցկացվող համատեղ աշխատանքային սեմինարների և գիտաժողովների կազմակերպմանը:

Դեկան Ա. Կարապետյանը համալսարանի ղեկավարության անունից ողջունեց ներկաներին, կարևորեց այդպիսի մշակութային միջոցառումների կազմակերպումը:

Միջոցառման ընթացքում անցկացվեց համալսարանի «Լավագույն ուսանող» և «Դասախոսը ուսանողի աչքերով» մրցանակաբաշխությունը, ըստ որի ուսանողներից մրցանակների արժանացան՝

1. Ստեֆեն Ջոզեֆ Ուալշ՝ հուշանվեր (Բուժ. 2-րդ)
2. Օֆելյա Նազարյան՝ հուշանվեր (Ստոմ. մագ. 2-րդ)
3. Զիյադ Տարիք Ջամալ Ալ Բայատի՝ հուշանվեր (Բուժ. 3-րդ)
4. Ռոհինի Պրաբհակար Ջադբուկե՝ հուշանվեր (Բուժ. 2-րդ)
5. Կարվան Համզա Հասսան Հասսան՝ շնորհակալագիր (Բուժ. 2-րդ)
6. Շեբնա ԱննԴանիել՝ շնորհակալագիր (Բուժ. 2-րդ)

7. Փուջա Վաղ՝ շնորհակալագիր (Բուժ. 2-րդ)
8. Թանուջ Մուկեշկումար Շարմա՝ շնորհակալագիր (Բուժ. 3-րդ)
9. Մարյամ Մոհամմեդ Աբբաս՝ շնորհակալագիր(Ստոմ. 4-րդ)
10. Ռանիահ Ռզզար Կակլ Ջաֆ՝ շնորհակալագիր(Բուժ. 4-րդ)

Դասախոսներից մրցանակի արժանացել են՝

1. Նինա Խլղաթյան՝ «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի «Անատոմիա» առարկայի դասախոս
2. Արև Զեյնալյան՝ «Ստոմատոլոգիայի» ամբիոնի Թերապևտիկ ստոմատոլոգիա առարկայի դասախոս:

Համալսարանի ռեկտոր Ն. Սարիբեկյանը շնորհավորեց մրցանակակիրներին և նրանց մաղթեց նորանոր հաջողություններ:

Երեկույթի ընթացքում համալսարանի տարբեր ազգերի ուսանողներ ներկայացրին իրենց՝ մշակույթը՝ ազգային պարը, երգն ու երաժշտությունը:

8.3. 2019 թվականի դեկտեմբերի 13-ին Ավանդական բժշկության համալսարանում ԱԲՀ-ի Ուսանողական գիտական ընկերության և Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Մեր կոչումն է բժիշկ» խորագրով ինտելեկտուալ մրցույթը: Միջոցառումը, որն ընդգրկում էր բժշկության և այլ կարևոր բնագավառներին առնչվող հարցեր, միտված էր ավելի ընդլայնելու ուսանողների աշխարհայացքն ու ընդհանուր գիտելիքները:

Խաղ-վիկտորինան նպատակ ուներ բացահայտելու ոչ միայն ԱԲՀ-ի առավել ինտելեկտուալ ուսանողներին, այլև նրանց բազմապիսի ընդունակությունները: Ուստի, մրցույթի երկրորդ փուլը, որը կրում էր «Գեղարվեստական ինքնագործունեություն» խորագիրը, ուսանողներին հնարավորություն ընձեռնեց իրենց ունեցած ունակություններով մրցել նաև աստունքի, երգի և պարի ոլորտներում:

Ժյուրիի նախագահ, պրոռեկտոր, դոցենտ Արայիկ Գյոզալյանը ողջունելով և հաջողություններ մաղթելով մասնակից թիմերին՝ նշեց, որ նման ներբուհական միջոցառումների անցկացումը համալսարանում կարևոր նշանակություն ունի:

ՈՒԳԸ նախագահ Օֆելյա Նազարյանը անդրադառնալով մրցույթի նպատակին՝ իր խոսքում նշեց, որ այն առիթ է ի ցույց դնելու, որ ուսանողները ժամանակը զուր չեն վատնում համալսարանի պատերի ներքո: «Այստեղ իսկապես հասունանում են ապագա ժողովրդական սեր ու հարգանք վայելող բժիշկներ ու գիտության նվիրյալներ»,-եզրափակեց Օֆելյա Նազարյանը: Մրցույթն անցկացվեց անգլերենով, իսկ այն վարեց Ստոմատոլոգիական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Ասրա Շարիֆին:

Նշենք, որ մրցույթին մասնակցեցին 3 խումբ, յուրաքանչյուր խմբում՝ 5 ուսանող: Ամփոփելով արդյունքները՝ նշենք, որ առաջին պատվավոր հորիզոնականը զբաղեցրեց «Skull scavengers» թիմը, երկրորդ տեղը՝ «Santa doctors» թիմը, իսկ 3-րդը՝ «Hippocrates» թիմը: Մասնակից թիմերին տրվեցին համապատասխան պատվոգրեր, իսկ հաղթող թիմին նաև՝ գավաթ: Բացի այս, ԱԲՀ-ի ռեկտորատի կողմից սահմանվել էր ևս երեք անվանակարգ՝ «Լավագույն բեմականացում» անվանակարգում հաղթող ճանաչվեց «Hippocrates» թիմը, «Անատոմիայի գիտակ» անվանակարգում «Santa doctors»-ը,

«Կենսաբանության գիտակ» անվանակարգում՝ «Skull scavengers» թիմը:

8.4. 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Համալսարանը հյուրընկալեց “Bharatiya”-ի ճարտարագիտության, գիտության և տեխնոլոգիաների ինովացիոն համալսարանի (BESTIU) ռեկտոր պարոն Բհարատ Լալ Մենային: Պարոն Բհարատ Լալ Մենային ծանոթացավ ԱԲՀ-ում գործող կրթական համակարգի, նրա առանձնահատկությունների հետ և առանձին հանդիպում ունեցավ համալսարանի ղեկավարության հետ, որի ընթացքում քննարկվեցին համագործակցության հիմնական դրույթները և հետագա քայլերը, ինչպես նաև երկկողմ հետաքրքրությունն ներկայացնող հարցերի լայն շրջանակը, փոխգործակցության ընդլայնման և խորացման հնարավորությունները:

8.5. Ավանդական բժշկության համալսարանի ուսանողներն իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում ինչպես ներբուհական, այնպես էլ նրա սահմաններից դուրս իրականացվող մշակութային տարբեր միջոցառումներին:

2020 թվականի հունվարի 26-ին ԱԲՀ-ի հնդիկ ուսանողները մասնակցեցին Հնդկաստանի Հանրապետության անկախության 71- ամյակին նվիրված միջոցառմանը:

8.6. 2020 թվականի փետրվարի 15-ին Հնդիկ ուսանողների բարեկեցության մշակութային կենտրոնը կազմակերպել էր իր անդրանիկ միջոցառումը:

Կազմակերպությունը մեկ հարկի տակ էր հավաքել հնդիկ և հայ շնորհաշատ երիտասարդների և պատանիների, ովքեր հանդես եկան պարային և երաժշտական մի շարք համարներով: Մասնակիցների թվում էին նաև Ավանդական բժշկության համալսարանի ուսանողները:

Միջոցառման հյուրերի կազմում էին ԱԲՀ Որակի ապահովման և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը, Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը և Որակի ապահովման առաջատար մասնագետ Մանուշակ Հովսեփյանը: Միջոցառման ավարտին պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը պատանիներին հանձնեց մասնակցության վկայականներ:

8.7. Հիմք ընդունելով “Study Medicine Europe” կազմակերպության հրավերը, Համալսարանը թույլատրեց «Բուժական» ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողուհի Մարյամ Հուսաինին մասնակցել Մեծ Բրիտանիայի Բիրմինգհեմ քաղաքում կայանալիք բաց դռների օրվան, որը տեղի ունեցավ 2020 թվականի փետրվարի 29-ից մինչև մարտի 7-ը: Համալսարանը նախապես տրամադրել էր ուսանողուհի Մարյամ Հուսաինին անհրաժեշտ նյութեր Ավանդական բժշկության համալսարանը հավուր պատշաճի ներկայացնելու համար: Բաց դռների օրվա ավարտից հետո ուսանողուհի Մարյամ Հուսաինը ներկայացրել է զեկուցագիր միջոցառման վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել է նկարներ, որոնք կցված են ուսանողուհու անձնական գործերին: